*ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության*

*ապահովման վարչության պետ*

*Ս. Հովհաննիսյանին*

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ**

**29.07.2024-29.10.2024**

2024թ-ի հուլիսի 29-ից 2024թ-ի հոկտեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փորձագետ՝ **Քրիստինե Ռուբենի Պետրոսյանիս** կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Ընդունել եմ ՀՀ քաղաքացիների անձնագրերի ժամկետը լրանալու կապակցությամբ փոխանակման, կորստյան կապակցությամբ անձնագիր ստանալու, անհատական տվյալների փոփոխության կապակցությամբ անձնագիրը փոխելու դիմումներ:
2. Ընդունել եմ անչափահաս երեխաներին առաջին անգամ անձնագրավորելու և անձնագիրը ժամկետը լրանալու կապակցությամբ փոխանակելու դիմումներ:
3. Իրականացրել եմ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների հաշվառման և ժամանակավոր պաշտպանության վկայականների տրամադրման գործառույթներ:
4. Իրականացրել եմ Արցախից բռնի տեղահանված, ՀՀ քաղաքացիություն ստացած քաղաքացիների անչափահաս երեխաներին ՀՀ քաղաքացիություն տրամադրելու և ՀՀ քաղաքացու անձնագրով փաստաթղթավորելու գործառույթներ:
5. Իրականացրել եմ անձնագրերի մշակման և պատրաստման աշխատանքները:
6. Իրականացրել եմ ՀՀ քաղաքացիների նույնականացման քարտերի ձևակերպման և տրամադրման գործառույթները:
7. Իրականացրել եմ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառման, հաշվառումից հանման գործառույթները:
8. Իրականացրել եմ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների հանրային ծառայությունների համարանիշ ստանալու և չստանալու վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելու գործառույթներ:
9. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, անհատներին տրամադրել եմ անհատական հաշվառման տվյալների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:
10. Զբաղվել եմ անձնագրային ծառայություն դիմած քաղաքացիների դիմումների ընթացքին լուծմամբ:

11. Բաժանմունքի պետի հանձնարարությամբ նախապատրաստել եմ տեղեկանքներ, զեկուցագրեր և հաշվետվություններ:
12. Կատարել եմ բաժանմունքի պետի տրված հանձնարարականները:
13. Կատարել եմ քարտադարանի հետ կապված արխիվային աշխատանքները:
14. Վարել եմ բաժնի քարտուղարությունը:

Բոլոր գործառույթները կատարվել են սահմանված կարգով և ժամանակահատվածում:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության

ապահովման վարչության փորձագետ **Քրիստինե Ռուբենի Պետրոսյան**

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

Գնահատում եմ <<........................>>

ՀՀ ՆԳՆ ՓՇԱՎ պետ Ս. Հովհաննիսյան

<<21>> հոկտեմբեր 2024թ.